



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարությունը ընդունվում է ամեն լիցուով.
Յայտարարությունները համար վճարում են
խրաջանչիւր բառին 2 կոպեկ
ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՅՎԱԾ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

25-րդ ՏԱՐԻ

25-րդ ՏԱՐԻ

ԻՐԱԿԱՆՍԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պարագրամայով և նոյն ուղղությամբ և ամբար: Մեր ստանում ենք սեփական հեռագիրներ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տան և մէկ և տան ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղադրատեսակ և Բարձրագույն փողոցների անկիւն):
Կայսրութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարությունները ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական դրութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Բաղուի հայոց ինտելիգենցիայի կեանքից. Ազգայնականութիւնները կովկասում. Նամակ կարգից. Նամակ Գուբայից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից.—ԽԱՌՆ ԼՈՒԿՆԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մոռացված սկզբունքը.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի քաղաքական դրութիւնը շարունակում է նոյն անորոշութեան մէջ մնալ և բազմաթիւ ծանրակշիռ հարցեր մնում են առանց բաւարար լուծման և կարական ձևակերպութիւնների: Պետութիւնները կասկածով և թերահաւատութեամբ են միմեանց վերաբերվում և փոխենում են, որ չը լինի թէ այս կամ այն որոշումով զգալի կերպով փոփոխվում են նրանց շահերը: Ամենամեծ երկիւղը պետութիւններին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՒԱՅՎԱԾ ՍԿՋՐՈՒՆՔԸ

IV

Այլ ևս չը դատաւարանք գիտութիւնը: ձեռնարկում է, նա իր մի հրաշալի գիւտի հովանու տակ առաւ չարագործութիւնների զգացմունքը, որ միշտ կգաւ ևս մարդու սրտին. ձեռնարկում է, այդպէս անելով, նա չառ թոյն մտցրեց կեանքի մէջ, բայց միթէ մեղաւոր է նա Մարդկային իրաքանչիւր գործին յատուկ է այդպիսի ձակատաղի. ոչ մի պարզ ճշմարտութիւն առանց զոհերի չէ հաստատվել երկրի վրա: Իսկ զոհերը, որքան և շատ լինէին ու ցաւալի, չեն յուսահատեցրել մարդուն, որ շատ վաղուց է սովորել թէ իր հայրենիքում չը կայ երջանկութիւն, որ տանջանքներով չը լինի գնված:

Այժմ նոյն գիտութիւնը գտնում է իր պակասութիւնը: Նա այլ ևս մի խուլ բուրմ չէ, որ պատգամներ է արձակում և չէ կարողանում լըսել թէ ինչ հեծեմանքներ են նրանք տարածում ճշմարտութիւնների կարօտ աշխարհում: Գիտութիւնը լոյս է և չէ կարող ծառայել խաւարի գործին. նա մարդու խելի արտադրութիւն է և չէ կարող ոչնչացնել մարդկայնութեան սկզբունքը, առանց սրի աշխարհը դժոխք է, այն պիտի դժոխք, որը չեն կարող նկարագրել նոյն իսկ Դանտեները: Եւ ահա գիտութիւն էլ խո-

նորենում է Անգլիան, որ միշտ կարողացել է խոշոր ընդհարումներից և միջազգային բանակցութիւններից էական օգուտներ ձեռք բերել իր համար: Այն հանգամանքը, որ Անգլիան առանց մեծ ծախքերի և զոհաբերութիւնների իր ձեռքը ձեռք կերպարան է կիրառել այնպիսի մի ժամանակ, երբ ուրիշները չէին կարող ոչ մի կերպ խանգարել այդ հեշտ, բայց խոշոր նուաճումները առիթ էր տալի մտածել, որ և վերջին դէպքերում Անգլիան չէր մոռացել իր շահերը:

Մի շարք ծառայողներ և քաղաքական գործիչներ թէ Անգլիայում և թէ Ֆրանսիայում մասնաւոր ինքնուրույն են լինում այդ հանգամանքի վրա և դրանով են բացատրում եւրոպական պետութիւնների անտարբեր վերաբերմունքը դէպի այնպիսի երևոյթներ, որոնք կը հրդեհէին եւրոպան քաղաքական և յիսուն թաւաններին: Անգլիայի վերջին ժամանակի քաղաքականութեան համար դիպլոմատները զանազան

սում է հաշտութեան, եղբայրութեան խօսքը: Նա, վերջապէս, ձանաչում է սէրը և ընդունում է, որ զա վերացական վարդապետութիւն չէ, ամպերի ետևում ծածկված մի անորոշ ցնորք չէ, այլ իրական պահանջ է, բնութեան կանոն, այն բնութեան, որ մարդուն աշխարհ ուղարկելով զրկել է նրա ծոցում մանջնական հրաման—մեռնել ուրիշներին ասրեցնելու համար: Այդ դադանի և հրաշալի հրամանը դարերի ընթացքում կուսպաշտութիւններն էր, միտաբանական հասկացողութիւն, որ խոնկի և մաղդալտների աշխարհին էր պատկանում: Իսկ այսօր բազմում է դրական գիտութեան, բիօլոգիայի մէջ:

Հարկւոր էր, վաղուց հարկւոր էր: Թիւ ու համար չունեն այն զոհերը, որոնց կլանեց մարդու մէջ նստած գաղաղը: Այանդանոցը ոճրագործութեան տեղ չէ, այլ տաճար. իսկ նրա կառավարիչները հրէշներ չեն, այլ խելքի և տաղանդի տէր մարդիկ, որոնց համար դեռ փառքի պատկեր կան պատմութեան էջերում: Այսպէս զանոց խղճների, թոյլերի համար, նրանց մըրմունքները, հառաչանքները բողբոջ ձայններ չեն, այլ անգութ կուր երամշտութիւն: Նայեցէք լեւրոպային: Ամեն ինչ կանգնած է այնտեղ սուրիների տակ: Իսկ ինչի համար են սրված այդ պողպատի կտորները: Ի՞նչ միտք ունեն այդ երեք պետեան դաշնակցութիւնները, այդ փայլուն զօրահանդէսները, ինչու Գերմանիայում այսօր փառքը, պատիւը, երկրպագութիւնը միայն և միայն պատկանում են սաղաւարտին, արիւնահեղութեան գործիքին: Միայն մի պատասխան կայ.—

բացատրութիւններ էին որոնում: Նախ կարծեցին թէ Անգլիան կամենում է Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի ուշադրութիւնը յետ դարձնել Կորէայի և Չինաստանի ամբողջ կատարվող ծանրակշիռ գործերից. յետոյ կնխագրեցին թէ Անգլիան ցանկանում է երկպառօք առ միշտ իր ձեռքը գցել և Միջերկրականի ու Վարմարայի գլխաւոր տէրը դառնալ: Այդ պատճառով եւրոպական ցամաքի դիպլոմատները աչքերը չառն միայն մի բան էին որոնում, թէ ինչպէս պէտք է Անգլիան իր շահերը առաջ տանի և թէ ո՞րն է այն ձանաղապահը, որ նա ընտրել է իր նպատակների համար:

Զբաղված լինելով Անգլիայի վերաբերութեամբ ամենածայրահեղ ուտիկանական հետախուզութեամբ, եւրոպական պետութիւնները միայն մի սկզբունքի վրա էին պնդում, մի բանաձևի վրա շեշտում, որ ամեն բան լինի եւրոպական ընդհանուր համաձայնութեամբ, ընդհանուր որոշումով, եւրոպական ներդաշնակութեամբ: Անգլիան խոնարհվեց ներդաշնակութեան և միաբան գործունէութեան սկզբունքի առաջ: Բայց այդ ժամանակ առաջ եկաւ մի երկրորդ և շատ լուրջ խնդիր. ինչպէս պէտք է միաժամ եւրոպայի իրաւորներ իր որոշումները պէտք է նա արդեօք դիմի բուն ոյժի և իթէ այդ, ուժ ձեռքով և ի՞նչ լիազրութիւններով:

Այս հարցերի լուծումը մինչև այժմ չէ զանախ: Գլխավորապէս զուլս են կուսութեան և յայտնի չէ, թէ երբեք միաբան կրնաւան այն, ինչ պատուիրում է իրերի լոյկիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻՍՏԻ ԿԵԱՆՔԻՆ

(Նամակ Բաղուից)

Այստեղի ինտելիգենցիայի զգալի պակասութիւններից մէկն էլ չարքնական ներողամտութիւնն է, ներողամտութիւն դէպի անձնատուրութիւնը, ներողամտութիւն դէպի հատարական

միմեանց կատարելու, միմեանց ոչնչացնելու համար, յանուն գոյութեան կուր, յանուն այն դադանային սկզբունքի, որ գրած օրէքի է դառնել, որ ցցված է հրապարակներում, յաղթական սուրների վրա: Քաղաքականութեան սրտի մէջ իրը ված է մահաբեր դէնքը. ժողովուրդները բառանչում են, հեծեմում են, նրանց լսող չը կայ, ամեն ինչ կախարդվել է պատերազմական ոգու թունաւոր յունչից: Բողբոջ—զա ծովի կատաղի մոնչոց է, որ աղմկում է ծովափնեայ այրերը և նորից վերադառնում է ջրային անհուն տաքածութեան ծոցը: Մարդկութիւնը մանրանում է, վախ խելքը կուչ է գալիս, սեղմվում մութ խորշերում, նրա համար օդ չը կայ. խաղաղ ու աղաւտ տարածութիւնը, որի մէջ մի ժամանակ նա ստեղծագործում էր, հրաշալիքաբար, այժմ լցված է ահաւելի կաշմանքով: Չը կայ ժողովուրդը, չը կայ անհատ, որին ամեն օր չը սովորեցնէին ուտել իր նմանի միտք: Եւ այս գոթութեան հաստատված է այն հողի վրա, որ սքանչելի ճարտարապետը տնկել է անձնազոհութեան վիթխարի օրէքը. ուրիշին ասրեցնելու համար կեանք չը խնայելու օրէքը:

Վաղուց է, որ գիտութիւնը խել է կրօնից սրա հեղինակաւոր ձայնը: Գիտութիւնն է այժմ աղքատի դատաւարակը: Թող նա այժմ առաջ քաչէ մարդկայնութեան դատը և ուտուցանէ, որ զադանութիւնը իրէալ չէ, որ անձնազոհութիւնը անարդի միտքն է իշխանութեամբ մեխված է անարդ սիւնին և իբրեւ մարդակերութեան նշանաբան անէքի և զոհանքի առարկայ պիտի

երևոյթները: Մարդիկ խօսում, միմեան, դատում, դատաւարան են: Խօսքի չընանում տիրապետող տարրեր են հանգիստանում սկզբունքն ու զադափարը, այդ տեսակետներից և չափում, և կշռվում է Պախարակում են մարդիկ, որոնք պարտաճանաչ չեն, որոնք անանական կեանք են անցկացնում. թուք ու մար են ուղղվում այն մասնագէտներին, որոնք իրանց մասնագիտութիւնը շահաւերաբար հարստանաւում են և հանգիստ ապրում: Նախատիւնը է կարդացվում ամեն մի ինտելիգենտ մարդու, որ ձեռքբեր ծաղած՝ նստած է, հատարական պարտաւորութիւն չէ գրում, ոչինչ չէ չինում, այլ միայն և միայն իր անձնական շահերն աչքի առաջ ունի, և այն և այլն: Եւ այդպէս ամեն տեղ, ամեն շրջանում: Հանդիպում են երկու հողի մի տեղ, խմբվում են մի քանի ինտելիգենտներ, միշտ մի և նոյն երևոյթն է տեղի ունենում, և դատաւորի գեր ստանձնած՝ մեղադրանք են կարգում ուրիշների հասցէին: Ուրիշներին չը հաւանել, համեստ գործողներին ծաղրել, միշտ մեծ-մեծ պահանջներ անել, բայց անձնական պէս ոչինչ չը չինել, այդ մի ընդհանուր սրտտ է, որ յատուկ է ամեն մի անպէտք, ծոյլ և ոչ մի կարգին գործի ընդունակ արարածի:

Եւ այն այդ չէ միայն, այն էլ ցաւալին, որ ընդհանրապէս խօսքին չէ հետևում գործը և բազմաչափ իրադրեցից դուրս, իրականութեան մէջ, ոչ միայն չէ մերկացվում արատը, յանցաբար չէ մարակվում, այլ և չոյվում, յղկվում է... Աւր երկէ Բ. ի քաղաքականութեան ժամանակ նրան անուանում էր ստոր, անաղիւն, չողորմիկ, իսկ այսօր թխակցած, ժպտը երեսին ման է դալիս նրա հետ: Գ. ի խորամանկ, կեղտոտ մարդ է համարում, նրա ամեն մի վարմունքի մէջ նկատում է կեղծութիւն, աչքաւորութիւն, բայց նրան հանդիպելիս՝ ձեռքն աշխուշ է թախանարում, այնպիսի մտերմական հարց ու վարձեր անում և հանելի ժպտներ արձակում, որ տեսնողը կը կարծի թէ ամենամոտիկ սրտակիցներ են: Չը կայ անկեղծութիւն, չը կայ չիտակութիւն: Ոչ բարեկամն է որոշ, ոչ չարեկամը. մի-մի բամբակներ, որոնք համապատասխան սեղի են հանգամանքների՝ փոփո-

դառնայ ապագայ սերունդների համար, որոնց միմեանց է վայելել սիրով բոլոր բարիքները: Թող այժմ գիտութիւնը վաղ փչէ և ձայն արձակէ աշխարհի բոլոր կողմերը, որ գոյութեան կուր ստորակ մարդը պիտի կանգ առնէ, որպէս զի անձնազոհութեան տարուկ մարդը առաջ զընայ և կատարէ այն, ինչին սպասում է բնութիւնը: Թէ չէ՝ կուտուրական բարձրութեան վըրա կանգնած մարդը, որ միայն խելքն է ճանաչում և այն կապուածքը, որ ստացել է իր գաղան նախահօրից, մի կային կը լինի, որի ճակատը միշտ կը ծածկէ ստակալի յանցանքի մարդը: Բայց դեռ կայ մի մեծ հարց: Կարող է մի Կրտսեր մօնը հասնել Կարմիրի հեղինակաւորութեան: Ուրիշ խօսքով, կարող է անձնազոհութեան, ուրիշ երջանկութեան համար սեփական կեանք չը խնայելու մոռացված, ատելութեան մասնված օրէքը բազմել գոյութեան կուր օրէքի կողքին և յաղթանարել նրան այն իրաւունքով, որ ինքն է աւելի ուժեղ, աւելի մեծը, ինքն է ապագայի տէրը: Կարող է նա զադանային ետաւորութեան գլուխը ջախջախել: Ապրողը կը տեսնի: Յամենայն դէպս, առաջին խօսքը և ամենազեղեցիկ խօսքը—առված է:

Թող ամեն մէկը, որ բարեկամ է մարդկութեան, այդ խօսքի հետ դէպի նայնալիս ջնքը բարեկամութիւններ, որոնք թափվում են հողադործի սրտի խորքից, երբ նա վտրքիկ սերուն յանձնում է բնութեան լայնատարած ու չոր ծոցին...

խաթաններն են կրում, հնարամտաբարձր գոյ-
ններ ընդունում։ Մի վարմանը մի գործ, որ
սյուսթ իրական կերպով պատկերներ է համար-
վում մի շրջանում, վաղը նոյն վարմանը մի
այլ շրջանում ոչ միայն պատկերվում է, այլ
և պնդվում է որպես «անխորժուկեան», «չափ-
լուծեան» հեռանկար։

Փոխանակ մեկացնելու անհատական այդ ա-
րարանները, դիմակաւորվածների դիմակները պատ-
ռելու և հրապարակ նետելու, փոխանակ այդ-
պիսիներին հասարակական դատի ենթարկելու,
ինտելիգենցիայի լուրջ մասը իր անխորժու-
կեան, իր անարարեթուկեան հնորհիւ՝ դատա-
պարտելի ներդրումներն է մասնում։ Օրի-
նակներ որքան կամենաք։ Ահա քիչ քերականութեան
մասնագետ, տարիներով ծախսեր է արել, ու-
սում առել և վերջապէս դիպրոմ ձեռք բերել։
Հէնց առաջին տարին «հարուստ» հարսնացուի
հանդիպելով՝ պատկեր է, և բարեկամութիւն,
ինքնասիրութիւն, պատիւ ոտի տակ տուած՝
օժիտ է պահանջում և այդ յոյսով էլ աս-
րում։ Այդ անպատիւ դիպրոմաւորի վարմանը
պարտաւորում, դատապարտում ենք, իսկ հան-
դիպելով՝ քաղցր ժպիտով սեղմում ենք ձեռքը։
Ահա երկու ինտելիգենտ «բարեկամներ», ըստ
երկոյթի մեկի քան մոտերի։ Միմեանց մօտ
գնալ-գալ, ծաշել, քննարկել անել և այլն... բայց
բացակայութեան ժամանակ միշտ միմեանց
բամբասել, խորամանկ, երկու երեսանի, անաղ-
նիւ անուններով մկրտել... Այդպիսիներին տես-
նում, լսում ենք և դարձեալ լսում։ Ահա և մի
համակերպիչ համալսարանական, նա ընդհան-
րապէս լսու է, երբ խօսքը վերաբերում է հա-
մարակական լուրջ ինտելիգենցիայի, այդպիսի դէպ-
քերում շարունակ զանգատվում է, թէ ժամա-
նակ չունի, սաստիկ զբաղված է և շտապում է
վեր կենալ դուրս գնալ։ Սակայն նոյն «լուս» և
«զբաղված» պարոնը պատրաստ է ոչ միայն
ժամերով, այլ ամբողջ երեկներ թրե զաւ, բա-
ռախաղութիւններ, սրախօսութիւններ անել թէ-
կող թեկնասովի մի օրիորդի հետ... Այդ տե-
սակ աշքակապութիւնները դարձեալ անուշադրու-
կեան են տրվում։ Այն ասես, որ մէկը թեւո-
ւալ է և նոյնում կեղծութիւն, անաղնութիւն՝
ձայն ես նայում» ստորութիւն և չորսըրորիւ-
թիւն։

Եթէ կեղծում, չորսըրորում է աղէտ մանրա-
վաճառը, —այդ հասկանալի է. եթէ բռնանում,
հարստահարում է անկիրթ կառավարիչը, —տա-
նելի է. եթէ աներ է կործանում՝ վախատուն,
եթէ իր պիղծ կըրքերն անմեղ դո՛նք է բերում
եթէ իր պիղծ կըրքերն անմեղ դո՛նք է բերում
հարուստ միլիոնատէրը, այդ նոյնպէս հասկանա-
լի է... Բայց հասկանալի չէ, երբ նոյն կեղծու-
թիւնը, նոյն չորսըրորութիւնը զործ է գնում
մասնագէտը, անտանելի է, երբ բռնանում,
հարստահարում է զիպրոմաւոր կառավարիչը և
վերջապէս զըռուկ է, երբ խաբւում, անհաւա-
տարիւմ է գնում ինտելիգենտ ընկերը...

Պէտք է խիստ լինել և անողորձ անհրաժեշտ
է միանգամ ընդ միշտ պարզել յարաբերութիւն-
ները և հրապարակօրէն չորսըրորին չորսըրորի,
ստորին ստոր, խաբեալին խաբեալ անուննե-
րը տալ և անխնայ հարուածել։

Ն. Գալսեան

ԱՌԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂԿԱՍՈՒՄ

Պետերբուրգից հաղորդում են «Русскія Вѣ-
домости» լրագրին հետևեալը։

«Ներկայումս կառավարչական շրջաններում
հարց է յարուցված Կովկասի դատաստանական
գործի վերակազմութեան մասին, այդ վերանա-
րգութեան զլրաւոր նպատակն է արմատախիլ
անել այդ երկրում գոյութիւն ունեցող աւազա-
կութիւնները։ Պէտք է սակայն նկատել, որ այդ
կողմից Կովկասը կարելի է բաժանել երեք մա-
սի. Նախակովկասը, Կովկասեան չղթան և Ան-
դրկովկասը։ Սլաւոնութիւնների գործերի թիւը հիւ-
սիսին և աւազակութիւնների գործերի թիւը հիւ-
սիսին Կովկասում, մինչև Կովկասեան լեռնա-
շղթայի նախադուրը, անչափ են, և Ստաւրոպոլի
նահանգի, Թեթրիքի ու Կուրանեան շրջանների
հիւսիսային մասերի բնակիչները ապահով են
նոյնքան, ինչքան և կայսրութեան ներքին նա-
հանգներում։

«Բայց որքին այլ են ապահովութեան պայման-
ները Անդրկովկասում։ Եթէ միայնակ սպանու-
թիւններ, աւազակութիւնների և զինուորական

յարձակումների գործերի թիւը, կը տեսնենք,
որ այս տարվայ յունվար ամսից մինչև հոկտեմ-
բեր ամիսը 1,260 բնակիչների վրա մի այդպի-
սի գործ է ընկնում, իսկ Գանձակի նահանգում՝
մինչև անգամ 760 բնակիչների վրա։ Սլաւոն-
ութիւնների յաճախ զէպքերը (1801 զործ 9 ամ-
սում) սովորաբար բացատրվում են հարաւի բը-
նակիչների տաք բնաստութեամբ, զարգացման
պակասութեամբ, վրէժխնդրութեան սովորու-
թեամբ և աղքատացումով։ Եւրոպացի մա-
սերի փոխադարձ թշնամական յարաբերու-
թեամբ։ Բայց զբանից, ոճրագործութիւններին
քիչ չէ նպաստում և այն հանգամանքը, որ բը-
նիկները զէնք են կրում, այնպէս որ զրեթէ
ամեն մի վէճ զինեանում վերջանում է կամ սպա-
նութեամբ, կամ վէրքով, իսկ զրգոված գործիւն
մէջ կատարված սպանութիւնների թիւը կազ-
մում է ընդհանուր թիւի 60%-ը։ Այդ պատճա-
ռով սպանութիւնների և աւազակութիւնների
առանձին զէպքերը, որոնք կատարվում են նոյն
իսկ մի բանի անձանց ձեռքով, բայց առանց ա-
ւազակախումբ կազմելու, համարվում են կա-
նոնաւոր երկոյթ Անդրկովկասի ամբողջ սպա-
նակութեամբ աղքատացումով։ Դեռ Գաղաքնե-
րում, ի հարկէ, այդ ոճրագործութիւնները քիչ
են պատահում և լիաւովող զլրաւորապէս երկ-
րի գիւղական ժողովուրդն է. խաղաղութիւն-
ները կատարում են մեծ մասամբ տեղական
տանուտները, որոնք, երբեմն իրանց անձեռն-
հասութեան, երբեմն արեւահանգ վրէժխնդրու-
թեան երկրորդ տպաւորութեան տակ, բոլոր-
վին անկասուն կերպով են կատարում այդ խա-
ղաղութիւնները, ուստի և զործի 60%-ը դա-
րաբանցիւմ է յանցաւորներին չը գտնելու պա-
տճառով։ Անդրկովկասում էլ ամենապատճառ-
ոճրագործութիւնները համարվում են աւազակա-
խումբների ձեռքով կատարվածները։ Տաժանակի
աշխատանքից փախածները հետախուզում կազ-
մում են տեղացի ջիգիթների խմբեր և զլրա-
ւորապէս Բաքուի, Ներսիսի և Գանձակի նահանգ-
ներն են ընտրում իրանց յարձակումների ա-
պարդէ։ Քուրդայի նահանգում մասնաւոր վը-
տանաւոր են լեռնական աշխարհիկների արշա-
ւանքները։ Հարաւի կողմի Կովկասի սահմանա-
գիծային կէտերից գալիս են պարսիկ և քիւրդ
աւազակային խմբեր, իսկ հիւսիսային կողմից՝
Թիֆլիսի և Գանձակի նահանգներում, —աբաղից
վախած լեռնականները, թաղանթիկ Փոքր-Կով-
կասի անտառներում և մուկ անկիւններում,
բոլոր այդ ոճրագործները ապաստան են գը-
նում իրանց զաւանակից աղքատացիութեան մօտ։

«Այդպիսի պայմանների մէջ, սակայն, երկրի
ոստիկանութեան ներկայացուցիչներից շատ քի-
չերը կանգնած են իրանց կոչման բարձրութեան
վրա, ինչպէս երևում է 1895 թվին կատարված
ըննդութիւնից. ծառայութեան մէջ գործած յա-
նգանքների համար ընտրվեան տակ էին գտնու-
վում 3 դատաւարներ, 7 պրիստաւ, 8 զիւղական
տանուտներ և մի օգնական։ Եւ սակայն Անդր-
կովկասի ոստիկանական ներկայ կազմակերպու-
թեան ժամանակ այդ պրիստաւների և դատա-
ւարների վրա է ծանրանում երկրի մէջ
կարգ պահպանելու ամբողջ ծանրութեան պա-
տասխանաւորութիւնը։

«Այդ պատճառով աւազակային խմբերը ոչն-
չացնելու նպատակով մտադրութիւն կայ հե-
տեալ միջոցները ձեռք առնել. 1) նահանգի
մէջ երեքցած աւազակներին հալածելու և բռնե-
լու պաշտօնը յանձնել առաջուց ընտրված ոստի-
կանական պաշտօնեաներին, որոնք ծանօթ են
տեղական պայմանների հետ և ունեն զբա հա-
մար հարկաւոր յատկութիւնները. 2) մշակել
երկրի նահանգապետների համաձայնութեամբ,
ընդհանուր հրահանգ այդ պաշտօնեաների համար.
3) հարկի կողակներին կազմած խմբեր ուղարկել
օգնելու ոստիկանութեան՝ աւազակներին հալա-
ծելու գործում. 4) ներքին ոստիկանութեան
տեղական պաշտօնեաներին, թէ անհրաժեշտ է
գիւղական աղքատացիութեան մէջ եղած աղքե-
ցիկ անձերի վատահոլութիւնը գրաւել. 5) իրա-
խառն այս վերջիններին, ինչպէս և աղքատա-
կութիւնը, տալով նրանց զանազան տեսակ վար-
ձաբութիւն՝ աւազակներին գտնելու և բռնելու
համար. 6) ոստիկանութեան տեղեւոր և բռնելու
միջոցների մասին տեղեւորութիւնները կենտրո-
նացնել կառավարչապետի գիւնադատն մէջ. 7)
հսկել ոստիկանութեան գործունէութեան վրա»

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Նոյեմբերի 18-ին

Օգոստոսի վերջերից արդէն, ինչպէս յայտնի է,
սկսվեց գաղթականների հոսանքը։ Սակայն դեռ ոչ
մի տեղեկութիւն չէ հաղորդված թէ ինչ միջոց-
ներով ամբողջ այդ թշուառների բաղքը և որոշ
չափով ծածկվեց նրանց մեկուկիւնը։ Ահա այդ
մասին ենք կամենում մի քանի խօսք ասել այս
նամակում։

Եկած գաղթականներին, տեղական լաջորդ Ե-
ղիշ վարդապետի նախաձեռնութեամբ և ջան-
քով առաջին երեք օրը արվում էր հաց և գա-
լու երկրորդ օրից աշխատանք՝ եկեղեցական զըս-
րոցի և դպրոցական խանութների նոր շինու-
թեան վրա, նշանակելով սովորական օրավարձից
1 1/2 անգամ աւելի։ Այնպէս ընդունվում էին
անխորտա և տարեկանից սկսած, և այդ
նրա համար՝ որ եկողները ստիպված չը լինէին
մուրացկանութեան սովորելու և աղքատով հայ-
թայթելու իրանց ապրուստը։ Միմիայն ինչեւ
շինութիւնների վրա աշխատանք արվեց 796 չա-
փահաւ, 110 անչափահաւ, և 472 չափահաւ չըս-
տիւններին հին գաղթականներից, մնացածներն էլ
գործ գտնելով ամբողջութեամբ կարողացան զէթ
մասամբ լրացնել իրանց սկզբնական կարիքները։
Մի չարաթի աշխատողները սկսեցին լինել գիւ-
ղերը և գործի ընդունվում նոր եկածները։ Ո-
րովհետեւ գիւղերում 1894 թից էլ արդէն կային
գաղթականներ, այդ պատճառով հարկաւոր եղաւ
շատ տեղերում այդ գիւղերի մէջ վարձել բնա-
կարաններ։ Այժմ տեղաւորված են գիւղերում
մօտաւորապէս 5,000 գաղթականներ, տեղեկու-
թիւններ նոր եկածների և նահանգից նորերս
գուրս գնացածների մասին պակասում են։ Առ
այժմ ցրտերի պատճառով Կարս գաղթողները
քիչ են։

Փորձով տեսնելով, որ օժանդակութեան այդ
ծնը ամենանպատակաբարձր է, և առաջը առաւ
այդպիսի զէպքերում միշտ կրկնվող մուրացկա-
նութեան, ամսիս 17-ին Բարեգործական ընկե-
րութեան տեղական ճիւղն էլ իր նիստում որո-
շեց գործադրել նպատակելու մի և նոյն եղանակը,
բացառութեամբ հիւանդների և այն ընտանիքների,
որոնք զուրկ են աշխատող ձեռքերից։ Շնորհա-
կալութեան արժանի է նաև մեր նահանգապե-
տը, որի աջակցութեամբ բժշկական օգնութիւն
տրվեց և տրվում է մինչև այսօր ամբողջ նա-
հանգի գաղթականներին, ի նկատի ունենալով,
որ շատերը դրանցից հիւանդացի էին տիֆով։

Բացօթեայ աշխատանքները դադարել են այժմ.
սկսվել է Կարսի երկարատեւ և ցուրտ ձմեռը։ Ե-
կողները մերկ են և առանց անկողնի, տանհինգ
քան հողի միտսին պառկում են խոտերի վրա,
զուրկ վառելիքից։ Չը նայելով, որ Եղիշ վար-
դապետի կարգադրութեամբ հին ուսումնարանի
և հողեր կառավարութեան սենեակները արված
են սրանց, սակայն նրանք քիչ են և վերջապէս
այդպիսի զէպքերում անհասնելի ջանքը գիտա-
թէ շատ բան կարողանայ անել։ Ինչ պէտք է
լինի այդ ողորմելիների զրուկները մինչև գար-
նան սկիզբը։

Աւելորդ չենք համարում մի անգամ ևս չեխտել,
որ նպատակելու ներկայ ձեռ կրկնային օգուտ
պէտք է ունենայ թէ գաղթականների և թէ հա-
նարակութեան համար։ Մեր յաջորդի ձեռնար-
կած եկեղեցական կրթական շինութիւնները
վերջացան։ Արդէն սկսված է դպրոցական նոր
հսկայ շինութիւնը, և հաւանական է, որ չուտով
տեղի կունենայ և մայր եկեղեցու հիմնարկու-
թիւնը ևս. տեղի համար բանակցութիւններ
կառուածաւոր պ. Բաղդասարեանի հետ ար-
դէն վերջացած են։ Այդ շինութիւնները պա-
հանջում են հաղարարել աշխատող ձեռքեր, և
զբաղական մեծ գումար։ Օգնելով գաղթականնե-
րին, մեր հասարակութիւնը կարծես կատարած կը
լինի որոշ չափով իր պարտքը և զէպի կարսի հայ
ժողովուրդը, որ այս վերջին տարիների ընթաց-
քում զբաղանալի անձնութեամբ, և առանց
խնայելու, տալիս է իր կարողութիւնից
և ոյծից շատ վեր օժանդակութիւն իրան զիւրդ
թշուառ կարօտեալներին։

Աբէլ Ապրեանեանց

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Նոյեմբերի 13-ին

Մի քանի օրվայ աղմկալի ժողովներից յետոյ,
մեր նորենտի ձայնաւորները, վերջապէս, անցեալ

օրը հետեւեալ վճիռը կայացրին. դիմել Բաքուի
նահանգապետին, խնդրելով, որ մի ձեռնհաս և
ընդունակ մարդ նշանակէ իր կողմից՝ Ղուբայի
բաղադրադիւրի պաշտօնի համար, բանի որ այդ-
պիսի անձնաւորութիւն այստեղ աչքի առաջ
չունենա։ Գայտեցին մի և նոյն ժամանակ այդ
խնդրագրի մէջ, որ ասէիկ նշանակում են բաղա-
դարի ճամար՝ 900 ռուբլի, օգնականի ճամար՝
600 ռուբլի, իսկ քարտուղարի ճամար՝ 300—400
ռուբլի։ Օգնականի պաշտօնի համար արդէն
ընտրված է ձայնաւոր Բալաբէկ Հասանբէկով,
որը նախադատում էր այդ ժողովներին, Բաղա-
դարի նահանգապետի գրասենի համար անհաւա-
ձայն Գարսուղարի պաշտօնի համար աչքի ա-
ռաջ ունեն հրաւրել տեղացի պ. Սալամբէկեա-
նին. բայց նրա կողմից ոչ մի համաձայնութիւն
չէ կայացել։ Այստեղ ձայնաւորների ժողովները
քիչ տարաձայնութիւններ չառաջացրին, խմբերի
բաժանված ձայնաւորներ առաջարկում էին, մի
մասը՝ Սէրգէյ Բէկ Արաբկին, միւսը՝ Ֆեօդօրովին։
Սակայն ոչ մէկը չընտրվեց, ծագած անհաւա-
ձայնութիւնների պատճառով։ Դիմադրել է և
այն հանգամանքը, որ մի ոմն ձայնաւոր Խլան
Ֆեօդօրով Ղուբայի բաղադարին վարչութեան
անունով, որ դեռ գոյութիւն չունի մեղանում,
խնդրեց ներկայացրեց, որ ինքը հրաժարվում է
ընդունել քաղաքադիւրի թեկնածութիւն, —այսինքն
մի բան, որը նրան չեն առաջարկել ձայնաւոր-
ները...

Երկու խօսք Ասխաբադի քահանայական պա-
քարի մասին։ Փանեանց և Ալբաբեանց քահանա-
ները երկուսն էլ Ղուբայի հայոց դպրոցի նախ-
կին ուսուցիչներն են։ Դեռ այստեղ եղած ժա-
մանակ, ստեղծելով իրանց համար կողմնակիցնե-
րի շրջաններ, կատարի կուլ մեղեցին տեղական
քահանայ Ալաբեանցի դէմ, որը, պէտք է
խոստովանել, մի փորձաւոր և բարեխիղճ մարդ
է։ Կազմելով զանազան համախոսականներ, այդ
երկու քահանայացիները կամենում էին ընտը-
րել Ղուբայի քահանայ, համարելով սրան մի հա-
մեղ պատառ։ Սակայն այդ չաջողվեց նրանց։
Հիմա, տարիներից յետոյ, մեր քաղաքի համար
նշանակվեց Փանեանց քահանայ։ Յանկալի է, որ
այդ պաշտօնը ստանձնելու օրից մինչև վերջ նա
ոչ մի երկպառակութիւնների և անմիաբանու-
թիւնների դուռ չը բանայ։

Շաբաթ օր, ամսիս 9-ին, ուղարկեցին Բաքու
հողին յանձնելու համար նորերումս վախճան-
ված Ղուբայի քահանային զանապետ Մկրտիչ
Տէր-Մկրտչեանի մարմինը։ Հանգուցեալը մօտ
7 տարի ծառայելով այստեղ, յարգված էր մեր
հասարակութիւնից

Ս. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿՈՒՄ

Մենք ստացանք Կ. Պոլսից, Ռուսաց գործա-
կալութեան միջոցով, հետեւեալ հեռագիրը նոյեմ-
բերի 24-ից. «Հայոց նոր պատրիարքը այսօր
ունկնդրութեան ընդունեց սուլթանի մօտ»

Կ. Պոլսից, նոյեմբերի 9-ից, հաղորդում են
Ֆրանսիական «Sémaphore» լրագրին, որ թիւր-
քաց կառավարութեան կողմից, իբրեւ ցանկալի
կանդիդատներ պատրիարքական աթոռի հա-
մար, մասնաւոր էին արված հետեւեալ եպիսկո-
պոսները. — Վահրամ եպիսկոպոս Մանկունի,
Հայեակ եպիսկոպոս Դիմաքեան, Մաղաբեա
եպիսկոպոս Օրմանեան, Բարթոլոմէոս եպիս-
կոպոս, և Գրիգոր եպիսկոպոս Յովհաննիսեան։

Այս օրերս Մոսկվայում լայն տեսաւ յայտ-
նի պրօֆէսոր կոմս Կամարովսկու մի փոքր
բրօշիւրը «Восточный вопросъ» (Արեւելեան
հարց) անունով։ Այդ բրօշիւրի մէջ հեղինակը
աշխատում է համառօտ կերպով բացատրել ա-
րեւելեան հարցը այն ձեւով, ինչպէս նա կազմել է
պատմականապէս և ինչ կերպարանքով նա
այսօր հանդէս է գալիս, կամ, ինչպէս հեղի-
նակն է ասում, քննում է «Թիւրքիայի, այլ և
Եւրօպայում, Ասիայում, Աֆրիկայում գտնվող
նրա բոլոր հպատակ ցեղերի վիճակի և ապագա-
յի հարցը»։ Յոյց սալով քրիստոնէայ ազգերի
մասնաւորականների դէմ մղած կռիւ զանազան
փաղիւններ, հեղինակը անցնում է քննելու այն
հարցը, թէ հնարաւոր է արեւօք Թիւրքիայի ա-
պագայ գոյութիւնը և ուսումնասիրում է այն դա-
նազան ծրագիրները, որոնք առաջարկվել են մին-
չև այժմ արեւելեան հարցը լուծելու նպատակով։

Պ. Գեղեցիկ «Каспий» լրագրի մէջ նորից պատասխանեց մեզ և այս անգամ նա մատը զրկեց մի այնպիսի չափազանց քիչ քանակութեամբ, որ անհնար էր հասնել մինչև 100 մարկի քանակութեան: Մենք այլ ևս չենք խօսիս և կարող ենք միայն մեր ցաւակցութիւնը յայտնել պարտին: Եւ եթէ ճշնակեցեալ արտադրութեան լինէին այդ խոսքերը, մենք բոլորովին կը բաւականանայինք:

ՄՇԱԿԻ ԶԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕՂԵՍԱ, 23 նոյեմբերին: Ռուսաց ընկերութեան «Բելէկ» նախկինը չափանշանը, որ բաժնուկից Անգլիա էր գնում Նորվիկի կէտերին իր բնակարանը, խորատակեց լամպի ծոցում: Նախատեսները ազատված են:

ԼՕՆԿՕՆ, 23 նոյեմբերին: Նիւ-Եորկից հաղորդում են, որ Մալ-Կիւնէյ և հանրապետական կուսակցութեան ղեկավարները կատարեալ համաձայնութիւն կայացրին հրապարակելու կոնգրէսի արտադրող նախաձեռնող արդէն ապրիլի 3-ին մարտային նոր սխառած սահմանելու համար:

ԲՈՒՐԵՅ, 23 նոյեմբերին: Մի քանի եւրոպացիներ ժամապատով հիւանդացան: Երկուսը մեռան:

ԿԱՅԻՐԵ, 23 նոյեմբերին: Գործերի դրոշմները լարված է: Անգլիացիները աշխատում են ընդհանրապէս ազատել իրենց պետական պարտքի դրոշմարկի վարչութեան և դատաւարական հիմնարկութիւնների մէջ: Այդ նպատակով նրանք պըն-դում են, որ իր թէ դրամարկի պատուիրակները հակառակում են դատաւարի կատարմանը: Լորդ Կրոմբի յանձնած յայտարարելու պիտի լինի: Նրանք պընդում են, որ դեռ ևս այնքալ վճարական քաղ չէ արել: Լորդեր են պատում ձգնաժամի մասին: Անգլիաներ մամուլը խիստ կերպով յար-հանգում է դատարանի վճարի վրա և ասում է, թէ անհրաժեշտ է, որ Անգլիան իրական արհա-պետութիւն հաստատի իրականութիւն: Անգլի-ական ղեկավարող շրջաններն ևս այդ նոյն կար-ծին են յայտնում:

ՀՌՕՄ, 24 նոյեմբերին: Սերբիական թագաւորը ճանապարհ ընկաւ դէպի Ֆրանսիոյ:

Կ. ՊՈԼԻՍ, 24 նոյեմբերին: Տեղեկական պատ-րիարքը կանչվեց իշխան-Պիոսի, որ նրան յայ-տնուեց, թէ ցանկալի է, որ բեկնակի Ամբրոսիոսի ընտրութիւնը իրեն Ռոմիոսի մարտագլխի: Պատ-րիարքը յայտնեց, որ ընտրութիւնը կատարված է կանոնաւոր կերպով, և ինքն չէ կարող ինքն-իշխան նոր ընտրութիւններ նշանակել, ինչն պէտք է հարց ու փորձ անի սինոդին:

Կատակեցի է, որ սինոդը համաձայնի: Սին-ոդի ղեկավարող անդամները յայտնեցին, որ անհրաժեշտ է թող առ մի այդպիսի դէպք, և որ պատմական աղբյուրները եկեղեցու վրա դերակալութիւն չը պէտք է ունենայ: Միաները երկուսն են յայտնում, թէ արդեւ չի լինի սին-ոդական հերձուած, ինչ պարտաբար կը պնդի իր տեսակետի վրա:

Մէլեքբերի եպիսկոպոսի պաշտօնակատար Ա-նտիոս, որին ընտրութիւնները էկզարկ են ուղար-ձանալու, դատարանի ռոմի օձել Պէթայում մի տուն, որը բուսնական եկեղեցի է դարձ-րած: Տեղեկական պարտաբար այդ բանի դէմ է և դատարանի ռոմի պաշտպանութիւնը դանդաղ Բ. Կրան մօտ:

Դեռ պահները դիմեցին կատարութեանը հաղորդակցելով, թէ ինչու կատակ է ֆէնդին, որը իրաւաբանական պատժարկ էր նշանակված կրե-ակի համար, Նաղիմ բէօլ է փոխարինված: Եթէ կատակի, յայտնեցին դեռ պահները, չի գնայ կրեակ, յանձնաժողովը կը սկսի իր աշխատանք-ները առանց նրան:

Կ. ՊՈԼԻՍ, 24 նոյեմբերին: Տեղեկական պատ-րիարքը հրաժարվեց անվանել ճանաչել Ռոմիոսի միարտագլխի ընտրութիւնը: Պատրիարքը յայ-տնուեց, որ սերբիացիները կը հանգստանան:

ԼՕՆԿՕՆ, 24 նոյեմբերին: Երկուստեան կատա-վարութիւնը, զիջելով ինքնիշխանութեանը, ընդունեց բրիտանական կատարելութեան առա-ջարկութիւնը այն գումարների փոխառութեան մասին, որոնք պէտք է վերադարձվին պարտքի դրամարկի պահանջի ֆոնդին:

ԿԱՅԻՐԵ, 24 նոյեմբերին: Լարված դրոշմները շարունակվում են: Եթէ միևնույն ժամանակ կրե-ակի կրօնական առաջարկութիւնը, դա կը լինի որ-պէս ամենա ընթացող հայր: Արտաքին գործե-րի միևնույն պատասխանը արդէն ստացել է կրօնի, կատարելութիւնը ընդունում է ամենա ղեկավարների 31-ին վերադարձնելու և ազատ-յում ոչինչ պարտաւորութիւններ յանձն չառնե-լու պայմանով:

ԿԱՅԻՐԵ, 24 նոյեմբերին: Արտաքին գործերի միևնույն շարունակութիւն յայտնեց կրօնի Անգլիայի առաջարկած դրամական նպատակի հա-մար և ինքնիշխան մարկի Սոլթերիին ինքնիշխան կատարելութեան հրապարակելուը ցոյց տուած այդ մեծ ծառայութեան համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 22-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . 93 ր. 45 ֆ.

Բերլինի վրա 100 մարկ — . . 45 > 75 >
Պարիզի վրա 10) ֆրանկ — . . 37 > 22 1/2 >
Ռուսի — . . արժէ . . 7 > 50 >
Մարսայի կուպոններ — . . 149 > — >
Բարսայի գիսկոն — . . 6-7 > — >
40% պետական բենտ — . . 99 1/4 > — >
Ներքին 50% առաջին փոխառութիւն — . . 294 > — >
— երկրորդ — . . 254 1/2 > — >

50% գրաւ. թղթ. աղյ. կալ. բանկի — . . 212 1/2 > — >
50% պետական երկրորդ — . . — > — >
40% ներքին փոխառութեան — . . 93 7/8 > — >
41 1/2% գրաւ. թղթ. աղյ. կալ. բանկի — . . 101 1/8 > — >
Աղյ. կալ. Գետ. բանկի խաղարկութիւն — . . — > — >
41 1/2% վիճակ. Գետ. Գետ. բանկի — . . 101 > — >
Փոխ. ներքին. բանկի. մեծ աղ. — . . — > — >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ — . . 101 > — >
Ընկերութեան օգնական — . . 100 7/8 > — >
Մոսկովայի քաղաք. օգնական — . . 103 5/8 > — >
Օգնական — . . 98 > — >
Փիֆլին — . . 101 > — >
Փիֆլինի կալ. բանկի 60% — . . 98 7/8 > — >
50% — . . 101 > — >
Փոխական — . . 98 7/8 > — >
50% — . . 98 7/8 > — >

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԵՐՈՒՍԱԳԵՄ. Աստիկ: Շատ հարկաւոր ենք ձեր համակրութեան համար «Մշակ» ուղարկելը ցոյց տուած հասցեով: Սպասում ենք ձեր թըղ-թակցութիւններին:

ԵՐՈՒՍԱԳԵՄ. Ա—Գ: Քրդերի վերաբերեալ թըղ-թակցութիւնը անկարող եղանք ապագային:

ԼՕՆԿՕՆ. *** Ձեր թղթակցութիւններին սպա-սում ենք անհամբերութեամբ:

ԱՆԻՍՏԱՆԻՐՍ. Լ. Կ. Գալ. չէք հաղորդել հասցեն, որպէս զի կարողանաք «Մշակ» ու-ղարկել:

ԳՐՈՅՏԸ (Անգլիա) Խ. Ս. Գ.—բնակ: Շնոր-հանգ ենք ձեր առաջարկութեան համար: Գրե-ցէք, որպիսի ծախք կը ապագային: Ձեզ ուղարկ-վեց «Մշակ»:

ԲԱԳՈՒ. Յ. Խ. Շատ ցաւում ենք, որ անկարող ենք ապագային ձեր արմատ ֆելիտեմը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԵՂԵԿՈՅՑ

ԵՐԱՐՈՒՂԻ

Բաժն. դուրս է դալին	9 ժ. 40 ր. առ.	11 ժ. 20 ր. դէլ.
Թիֆլիս համուռ է	9 ,, 55 ,, եր.	12 ,, 25 ,, ցեր.
Թիֆլ. դուրս է դալին	10 ,, 50 ,, ,,	1 ,, 10 ,, ,,
Բաղու համուռ է	4 ,, 49 ,, ,,	7 ,, 30 ,, առ.
Բաղուց դուրս է դալին	2 ժ. 30 ր. ցեր.	11 ժ. 5 ր. դէլ.
Թիֆլիս համուռ է	8 ,, 21 ,, առ.	5 ,, 50 ,, եր.
Թիֆլ. դուրս է դալին	9 ,, 30 ,, ,,	6 ,, 50 ,, ,,
Բաժնում համուռ է	9 ,, 45 ,, եր.	8 ,, 15 ,, առ.

ԳԻՒԼԻԴԱՆՆԵՐ

Հին և հոգու համար	7 ժ. առ.	9 ժամ. առ.
Թիֆլիսի դուրս է դալին	Միւսում	Պատանու
Գիւլիսում է	6 ժ. երեկ.	8 ժ. երեկ.
Վաղելիակալ համուռ է	6 ժ. (չնչելու)	7 ժ. երեկ.
Վ. և Գ. հոգու համար	9 ժ. 30 ր. առ.	7 ժ. երեկ.
Թիֆլիսի դուրս է դալին	9 ժ. 30 ր. առ.	8 ,, 50 ր. ,,
Վաղելիակալ համուռ է	12 ,, — ցերեկ	

ԲՈՂԱԳՆԵՏ Բ. ՆԱԽԱՐԱՐՆԵՆ

փոխադրվել է նոր բնակարան՝ Միքայելեան փողոց, բժիշկ Վերվիլանի տուն, № 101. Հիւանդներին ԸՆԴՈՒՆՈՒՄ Է Երեկոյան 6 1/2—7 1/2 ժամին: (№ 137) 2—10

Բ Տ Ղ Կ Ե Կ Ե Կ

Ե. Ի. ՅՐԱՆՏԻՈՒՍ

Վերամիմիկայա № 4, Գումայի հանդէպ: Ընդունում է կոպրդի, քիթի և ականջի հիւան-դութիւն ունեցողներին 5—7 ժամ երեկոյան: (№ 127) 7—10

ՀԱՐԿԱՌԻ Է

ՎԱՐԺՈՒՆԻ

դիմնադրան աւարտած: Պայմանները կա-րելի է իմանալ «Մշակ» խմբագրատանը: (№ 136) 3—3

ԲՈՂԱԳՆԵՏ ԶԱՐԴԱՐՆԱՆՑ

Մոսկովայի կայսերական համալսարանի ման-կարոժական կլինիկայի նախկին օրդինատոր, ընդունում է միայն հիւանդ երեխաներին ամեն օր, ժամի 11 1/2—1-ը: Շաբաթ օրը՝ չի: Հասցեն՝ Ստարո-Պետրոսովսկայա, տ. № 13. № 103 (ըր.) 25—40

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՄՆԱԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՐԱՐՆԵՆ

(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՐԱՐՆԵՆ—11—12 ժ. փրարը. փոխան, փիֆլին և վնասական հիւանդու-թիւններին:
Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարային:
Կին-բժիշկ ԳՈՒՆԱՅԷՎԱ—ԲՈՒՆԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.
Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԿ—12—1 ժ. ականջի, կո-կորդի, քիթի և կրծքի հ. երկու-չարթի, չորեք-չարթի և ուրբաթ:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե-խային և նեարային հ. երեք-չարթի, չորեք-չարթի և չարթի:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-խային հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ՊՐՈՏԱՍԵՎԻԿ—5—6 ժ. երեք. հինգ. և չա-բաթ:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկու-չարթի և չարթի:
Ա. Գ. ԳՈՒՄԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէջի և ռեուական օրդաններ հ. ներքին և չարթի հ.
Ա. Գ. ԳՈՒՄԿՈ քիթի-ական և խոչըրացուցակա-նեարադոտութիւններ է անում մէջի, խիթ, ւ-բեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. Համալսարանի (Կոնսիլիումի) օգնականի համար առանձին:
Հիւանդանոցի վերահսկող՝ ՆԱԽԱՐԱՐՆԵԱՆ

Պատիւ ունեմ յայտնելու, որ մեր դրամա-տանդում գտնվում են հետեւեալ պատկերները:
1) ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԱՅԻ պատկեր, չրջապա-ված վեց նշանաւոր կաթիլի-պատկերով, ծաղկա-պատկերով. 2) ԳՐԻԳՈՐ ԱՐԲՐՈՒՆԻ պատկեր վեց նշանաւոր գործիչներով. 3) ՄԱՍՏԻՍԱՆ ԱՐԲ-ԵՊԻՍԿՈՍ ԻԶՄԻՂԵԱՆ պատկեր առանձին. մեծագոր արտադրված Արդուլայ եղբայրների լուսանկարից:

Ներք պատկերն էլ ճանաչարձանաւոր—1 լուրջի վճարը կանխիկ, կամ ուղարկել—15 հատ 7 կոպէկանոց մարկով: Գումարով պահան-ջողներին 100 հատ 25 ր. ճանաչարձանաւոր: Գումարով պահանջողները պիտի ուղարկեն փո-ղի 1/3 մասը պահանջի հետ:
Հասցեն. BAKY, գրավաճարանաց «Բաֆֆի»—Ա. Աստղան:

ՆԱԽԱՐԱՐՆԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացված է «ԱՐԱՐԱՆ» 1897 թիւ բաժանորդագրութիւնը: Հանդիս երկու գրքերը, որ պարու-նակելու է աւելի քան 150 ձեռն նկար, գրաւորապէս ճաշկանչատանի բնութիւնից և անդե-րից՝ ամենայն ճշգրտութեամբ կը հրատարակվին ապրիլ և նոյեմբեր ամիսներին:
Բաժանորդագրելու միւս է նոյնը—երկու գրքի համար 3 րուբլի: Արտաւաճառ՝ 10 ֆրանկ կամ զրկը (ապրիլ): Մեր այս ձեռնարկութեան մասին աւելի մանրամասնորէն գրուած է «Մշակ» № 135 ր. մէջ:

1895 տարեշրջանի 11 գրքը ըստ կր տեսնել փեթլաւին:
Գիտելու է այս ապահով հասցեով:
ՍԵՏԵՐԲՈՐԳ, Սիմեոն Գուլամիրանչ կամ ST. PETERSBOURG, Simeon Goulamirantz. Սիմեոն Գուլամիրանչ

ԻՆԺԵՆԵՐՆԵՐ ԵՄԱՆՈՎԻ ԵՒ ԱԼԻԻՍՆՈՎԻ

ԶՈՒԳՈՒՆԷ—ԶՈՒԼԱՐՆԷ ԵՒ ՄԵՆՈՒՆԻԿԱՎԱՆ ԳՈՐԾԱՐՆԷ փաշութիւնը Թիֆլիսում պատիւ ունի յայտնել ի զիտութիւն հաւարակութեան, որ ներկայ տարվայ նոյեմբերի 15-ից գործարա-նում արդիւնաբերութեան մի նոր ձեւ է մտցրված, այն է՝

ԶԱՆԳԱԿՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Արեն տեսակ զանգակների ձուլում, փորելից պիսած մինչև ամենամեծերը, կատարում են Ռուսաստանից այդ նպատակով հրաւրված փորձված փաշաները, ամենալաւ նիւթերից, որ հաւարակութիւն է տալիս գործարանին կատարելապէս երաշխաւորել գործուածքի ղեկավար-յալութիւնը: Բոլոր պատուէրները, թէ նոր զանգակներ ձուլելու և թէ փաշավաններ կարկա-տելու համար, կատարվում են ճշգրտութեամբ և չափաւոր գներով:

Պատուէրներով ինչպիսիք են զիմել՝ в контору чугуно-литейного, механического и коло-кольного заводоу инженеровъ Ярлова и Алиханова, ТИФЛИСЪ, Алексантровская ул., собствен-ный домъ, вблизи вокзала. (№ 138) 1—3

ԹԻՎԻԲՈՒԼԻ ԳԱՐԱԾԻԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԻ ԵՒ ԲՐԻԿԵՏԻ

արդիւնաբերութեան ընկերութեան փաշութիւնը արանով յայտարարում է ի զիտու-թիւն գիտելիքի, որ յիշեալ ընկերութեան բրիկետների փաշաւում լինում է իր տեղում, պիտի 13 կոպէկով: Մանրամասն պայմանները կարելի է իմանալ հանքերի գրասենական: Հասցեն հեռագիրների համար «Тквибульскія копн, управление». համալսարանի համար—Ку-таисъ—Тквибули, Управление Тквибульскихъ копей и брикетного производства. 14—15 (№ 124)

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ Մ. ՉՄԵԿԱՆԻ

«ՊԱՏԻՆ», «ՄՈՅԻՆ» և «ՊԱՏԿԵՐԱՉԱՐԿ» 1897 թ.

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Յանկայողները թող չտապեն յայտնելու, որպէս զի պատուէրները ժամանակին կա-տարվին: (№ 120) 15—15